11.	Զաքարյան Խաչիկ Արթուրի	Ոչ նյութաակն վնասի հատուցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների իրավական համակարգերում	Բեքմեզյան Գ
12.	Թոփուզյան Տիգրան Վահրամի	Քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքումը	Թավադյան Ա.
13.	Կարապետյան Կարինա Կարենի	Քաղաքացիաիրավական պայմանագրի միակողմանի լուծում	Հայկյանց Ա
14.	Կարապետյան Սամվել Ռուսլանի	Սեփականության անձեռնմխելիության սկզբունքը	Սողոմոնյան Ա
15.	Հայկյանց Մերուժան Արմենի	Ներկայացուցչությունը քաղաքացիական իրավունքում. դոկտրինա և իրավակիրառման խնդիրներ	Ղուկասյան Շ
16.	Հովհաննիսյան Յուրա Հարությունի	Սպառողների իրավունքների պաշտպանության արդի հիմնախնդիրները	Ավետիսյան Վ
17.	Ղազարյան Թամարա Սամվելի	Վնասների հատուցումն ըստ Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին ՄԱԿ-ի 1980թ կոնվենցիայի /իրավահամեմատական վերլուծություն	Հայկյանց Ա
18.	Մամիկոնյան Զորիկ Վահանի	Շինարարական կապալի պայմանագիր (ընդհանուր դրույթներ)	Ավետիսյան Վ
19.	Մանուկյան Էրիկ Հմայակի	Արտապայմանագրային պատասխանատվության առանձնահատկությունները Եվրոպական դեֆիկտային իրավունքի սկզբունքներով և համեմատական վերլուծությունը ՀՀ իրավական համակարգի հետ	Ղուկասյան Շ
20.	Մարգարյան Անահիտ Երվանդի	Պայմանագրերի դերը ընտանեկան հարաբերությունների կարգավորման մեջ	Սերոբյան Դ
21.	Մուրադյան Վաչագան Մուրադի	Անշարժ գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ կառուցապատման ընթացքում	Ղուկասյան Շ

		պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունները	
22.	Պատվականյան Ալիսա Արթուրի	Ընդհանուր սեփականության իրավունք	Ավետիսյան Վ
23.	Սահակյան Նաիրա Թաթուլի	Գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների հեղինակների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներ:	Ավագյան Ն
24.	Սիմոնյան Սվետլանա Մարատի	Ապրանքային նշանի իրավական կարգավորումը	Հովհաննիսյան Արփինե
25.	Փայտյան Լիլիթ Գագիկի	Ֆրանչայզինգի պայմանագիր	Հայկյանց Ա
26.	Փարամազյան Գայանե Աշոտի	Քաղաքացու առողջությանը պատճառված վնասի հատուցման կարգը	Բեքմեզյան Գ
27.	Փիլոյան Սեդա Տիգրանի	Վինդիկացիոն և ռեստիտուցիայի հայցերի մրցակցությունը	Թավադյան Ա
28.	Օհանյան Էլեն Պարզևի	Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների նկատմամբ իրականացվող խնամակալության և հոգաբարձության տեսական և գործնական հիմնահարցերը	Սերոբյան Դ

**Մագիստրոսական թեզեր/Դատական իրավունք և փաստաբանություն**

1.	Արշակյան Միլենա Սամվելի 098167307	Փոխնակ մայրության իրավական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ օրենսդրությամբ	Պետրոսյան Ռ
2.	Խոշբեկյան Լենա Համլետի 098565641	Բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի կարգավիճակը	Թավադյան Ա
3.	Կազարյան Նինա Ավիկի 033041616	Անհիմն հարստացման ինստիտուտը քաղաքացիական իրավունքում, իրավահամեմատական վերլուծություն	Ավետիսյան Վ
4.	Հարությունյան Անժելիկա Հարությունի 093787768	Ապահովագրական պայմանագրային հարաբերություններում սուբրոգացիայի ինստիտուտի իրացումը	Սերոբյան Դ

**Բիզնես իրավունք և միջազգային արբիտրաժ**

1.	Առաքելյան Հովհաննես Արայիկի 077585558	Պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները	Ավետիսյան Վ	
2.	Հարոյան Էլենա Արթուրի 098314342	Լիզինգային հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորումը ՀՀ-ում /իրավահամեմատական վերլուծություն/	Պետրոսյան Ռ	
3.	Ղարիբյան Լիլիթ Վաղարշակի 099266538	Օպցիոն համաձայնագրեր	Հովհաննիսյան Արսեն	
4.	Մովսիսյան Էդվարդ Արսենի 099398132	Ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ծագման հիմնախնդիրները /իրավահամեմատական վերլուծություն/	Ա.Հայկյանց	
5.	Նաջարյան Անի Արթուրի 077010740	Ապրանքային նշանի անվավերության հարաբերական հիմքերը ՀՀ օրենսդրությամբ /իրավահամեմատական վերլուծություն/	Թավադյան Ա	

**4. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների՝ մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացիկ վիճակի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):**

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամբիոնի վարիչներն ամփոփ տեղեկություններ ներկայացրին մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացիկ վիճակի մասին՝ արձանագրելով հնարավոր խնդրահարույց դեպքերը, մատնանշելով այն ուսանողներին, ովքեր գիտական սեմինարի ստուգարքը չեն ստացել, առկա խնդիրները լուծելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ի.գ.դ., պրոֆեսոր Հ.Խաչիկյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Դանիելյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունելի գիտություն:



**5. ԼՍԵՑԻՆ.** Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի՝ 2024-2025 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին:

Դեկան, պրոֆեսոր Հ.Խաչիկյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց ուսուցմամբ մագիստրատուրայի՝ 2024-2025 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունելի գիտություն:

**6. ԼՍԵՑԻՆ.** Ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:

**ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Նարինե Առաքելյանի ատեստավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ա.Հայկյանցը, պրոֆ. Հ.Խաչիկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նարինե Առաքելյանը հաշվետու ժամանակահատվածում ձեռք է բերել անհրաժեշտ գրականություն, պատրաստել է ատենախոսության երրորդ գլուխը, հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները կրթական բաղադրիչից և պրակտիկայից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Սեդա Ստեփանյանի ատեստավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սեդա Ստեփանյանը հաշվետու ժամանակահատվածում ձեռք է բերել անհրաժեշտ գրականություն, պատրաստել է

ատենախոսության երկու գլուխները, աշխատում է երրորդ գլխի վրա, հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները կրթական բաղադրիչից և պրակտիկայից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Զարինե Ազիզյանի ատեստավորման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ա.Հայկյանցը, պրոֆ. Հ.Խաչիկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Զարինե Ազիզյանը հաշվետու ժամանակահատվածում չի ներկայացրել ամբիոն, կապ չի հաստատել գիտական ղեկավարի հետ, չատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

## **7. Ընթացիկ հարցեր**

**7.1. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ Գևորգ Վիրաբյանի՝ «Իրավական կանխավարկածների ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգը (հիմնախնդրի լուծման մեթոդաբանությունը և հիմնադրույթները)» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ Գևորգ Վիրաբյանի՝ «Իրավական կանխավարկածների ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգը (հիմնախնդրի լուծման մեթոդաբանությունը և հիմնադրույթները)» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

**Խորհրդի քարտուղար**

**S.Սուջան**

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒՆ

### ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի 2023-24 ուս. տարում կատարած ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին

24-ը հոկտեմբերի 2024 թ.

#### 1. Ուսումնական և մեթոդական աշխատանքներ

1. *Ուսումնական և մեթոդական աշխատանքները* կազմակերպվել են ուսումնական պլանին և համալսարանի կառավարման մարմինների, ֆակուլտետի դեկանի որոշումներին համապատասխան: Կրեդիտային համակարգով ուսումնական ուղեցույցին համահունչ կատարվել են ընթացիկ ստուգումներ: Ընթացիկ և եզրափակիչ քննություններն ընթացել են ֆակուլտետի գիտխորհրդում հաստատած կարգին համապատասխան:

*ա) Դասախոսությունների անցկացման եղանակների կատարելագործում, նոր եղանակների ներդրում.*

Նախ, հիմնական լսարաններում մոնիտորների որոշակի խմբաքանակի կահավորման արդյունքում դասախոսությունները դարձել են առավել ինտերակտիվ: Նյութի ելակետային բանալի հատվածները ցուցադրվում է մոնիտորով՝ հընթացս պարզաբանվում են դրանց բաղադրիչները: Գործնականում մեծաթիվ ուսանողներով լսարաններում ավելի մեծ ուշադրությամբ հետևելու գործոնը դարձել է ակնհայտ: Նորամուծությունը այս տեսանկյունից դատական պրակտիկայի վիճահարույց նյութերի հենքով դասավանդումն է, մասնավորապես, համադրվում են հակասական դատական ակտերը և դրանց առնչությամբ դոկտրինալ մեկնաբանությունները:

*բ) Սեմինար և գործնական պարապմունքների անցկացման եղանակների և մեթոդների վերանայում, դրանց կատարելագործում և նոր մեթոդների ներդրում.*

Սեմինարները հիմնականում կազմակերպվում են ուսանողների առանձին զեկույցների տեսքով, որոնք կազմվում են նախապես կոնկրետ սեմինարի թեմաներով, սակայն ընդգրկում են լրացուցիչ աղբյուրներից մշակված նյութերը: Սա հնարավորություն է տալիս մի կողմից ձևավորելու հետազոտական աշխատանքների հմտություններ, մյուս կողմից՝ խորացնելու գիտելիքները և դուրս գալու դասագրքային շրջանակներից:

Գործնական պարապմունքները, գրեթե առանց բացառության, անցկացվում են դասախոսների կողմից մշակված խնդիրների ու առաջադրանքների քննարկմամբ: Խնդիրների մշակմանը մասանբ մասնակցում են նաև ուսանողները (ինչը գնահատվում է «մասնակցություն» բաղադրիչի շրջանակներում), ինչպես նաև ասպիրանտները:

Ձևավորված ավանդույթի ուժով որոշակի բարդ թեմաներով գործնական պարապմունքներին հրավիրվում են մասնագիտական աշխատանքում փորձառու և, որպես կանոն, գիտամանկավարժական աշխատանքի փորձ ունեցող պրակտիկ աշխատողներ (օրինակ՝ Վճռաբեկ դատարանի դատավոր Ռուզաննա Հակոբյանը) և այլն: Ընդ որում, պրակտիկ աշխատողների ընտրությունը թելադրված է լինում

վերջիններիս կողմից իրականացվող գործունեության բնույթի և ընտրված թեմայի համադրմամբ:

Ամբիոնի համար շահեկան է նաև այն, որ դասախոսական կազմը համալրված է հիմնականում՝ նեղ մասնագիտական աշխատանքում ներգրավված պաշտոնյաներով և փաստաբաններով:

*գ) Ուսումնամեթոդական ծրագրերի, հարցաշարերի, խնդիրների, թեստերի ստեղծումը և նոր առարկաների ներդրումը.*

Առանձին դասընթացների մասով վերջին տարիների ընթացքում մշակվել և էլեկտրոնային եղանակով ուսումնական կայքերում գետեղվել են խնդիրների ժողովածուներ, որոնք պարբերաբար թարմացվում են՝ օրենսդրական փոփոխություններին զուգահեռ:

**2. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ուսումնական ծանրաբեռնվածության առանձնահատկությունն այն է,** որ վերջինս ներառում է համալսարանի առանձին ֆակուլտետներում «Իրավունքի հիմունքներ» դասընթացի դասավանդումը, այն արդեն դարձել է կամընտրողական: Ամբիոնի դասախոսները մի շարք այլ ֆակուլտետներում դասավանդում են նաև «Պետության և իրավունքի տեսություն» առարկան: Այս տեսանկյունից արձագանքները հիմնականում դրական են: Դասախոսներ Ռոզա Աբաջյանը և Արտյոմ Սեդրակյանը այլ ֆակուլտետներում դասախոսություններ են կարդում նաև անգլերեն լեզվով:

**3. Հեռակա բաժնում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանն ուղղված քայլեր:**

Դասավանդումը և դրա մեթոդական ապահովումը կատարվում է գրեթե նույն չափանիշներով ու մեթոդաբանությամբ, ինչ առկա համակարգում, պարզապես դրանք հարմարեցված են դասավանդման այդ եղանակի հետ և փորձ է արված հնարավորինս չվնասել արդյունավետությունը:

Քանի որ այս ուսուցման ձևի հարցում ամբիոնը ունի նկատելի դերակատարում, հատկապես այլ բուհերից *տեղափոխությունների տեսանկյունից*, ձգտում ենք հնարավորինս ուշադիր լինել և բացառել նվազագույն պահանջներին չբավարարող անձանց մուտքը: Այս հատվածի հետ աշխատանքի լրացուցիչ բարդությունն այն է, որ ուսանողների ունակությունների միջև տարբերությունը անհամեմատ մեծ է և օբյեկտիվորեն դժվար է լինում ընտրել այնպիսի բարդության նյութ, որ հասանելի լինի թույլ առաջադիմություն ունեցողների համար, բայց և բավարար չափով արդյունավետ լինի բարձր առաջադիմություն ունեցողների համար:

## **2. Աշխատանք ուսանողների հետ**

1. Հաշվետու տարում կազմակերպվել է ամբիոնի գծով ուսանողական գիտական ընկերության միջոցով 3 սեմինար-քննարկում:

Այս ոլորտում մեր անելիքները դեռևս շատ են, կարծում են, հարկ է գերծ մնալ այն մտայնությունից, որ ցածր կուրսեցիներին առանձնակի չարժե ներգրավել արտալսարանական հետազոտական աշխատանքների մեջ: Իհարկե, արդյունքները այն աստիճանի չեն, որ խոսք գնա հրապարակումների մասին, բայց փորձ ձեռք բերելու և անհրաժեշտ պատասխանատու վերաբերմունք ձևավորելու տեսանկյունից դրանք անհրաժեշտ են:

Հաջորդ խնդիրը գիտաժողովների արդյունքներով լավագույն ուսանողին ճանաչելու կտրվածքով է: Կարծում են, հարկ է նախապես առաջադրել այնպիսի

պայմաններ ու չափանիշներ, որպեսզի բացառվի դրանցում բակալավրիատի և մագիստրատուրայի երկրորդ տարվա ուսանողների միաժամանակյա մասնակցությունը:

### **3. Գիտահետազոտական աշխատանքներ ամբիոնի գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ամփոփ տվյալները**

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը արդյունավետ է աշխատել, մասնավորապես՝ հրատարակել է.

#### **5 մենագրություն.**

Դատական իշխանության անկախությունը: Ձեռնարկ Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների համար / **Ա.Վաղարշյան, Գ.Դանիելյան, Ե.Խոնդկարյան, Վ.Շուրեբո:** Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Դանիելյանի. – Եր.: «Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ» հայաստանյան մասնաճյուղ, 2024. – 242 էջ (Գ.Դանիելյանի հեղինակությամբ 3-րդ և 6-րդ գլուխները, համապատասխանաբար՝ 73-105, 212-238 էջեր և համահեղինակությամբ «Եզրափակիչ խոսք»-ը՝ 239 էջ):

**Տարոն Սիմոնյան** - Պետաիրավական համալիրություն եւ սիներգետիկա / Մաս 2, Իրավունքի սիներգետիկա կամ Արդի իրավունքի համալիրություն, 2023 | Մենագրություն, Երևան, Հայրապետ հրատակչություն, 2023, 240 էջ:

**Վաղարշյան Ա.**, «Երկրի պաշտպանության ու անվտանգության ոլորտի սահմանադրական կարգավորման հիմնախնդիրները խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում», էջեր 139-186, տպագրվել է «Պառլամենտարիզմի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում» /– Եր.: Հայրապետ հրատ., Բեգլարյան Ա., Ալեքյան Մ., Վաղարշյան Ա., 2024: – 208 էջ:

**Вагаршян А.**, [«Проблемы конституционного регулирования сферы обороны и безопасности страны в условиях парламентской формы правления»](#), стр. 124-178, в монографии «Развитие парламентаризма в Республике Армения» Бегларян А., Алекаян М., Вагаршян А., /– Եր.: изд. «Айрапет», коллективная монография, 2024. – 191 с.

**Վիրաբյան Գ.Մ.** Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի որոշ հարցերի շուրջ: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր.: «Հայրապետ» հրատ., 2024, 160 էջ:

#### **3 դպրոցական դասագիրք.**

**Ա. Վաղարշյան**, Վերահրատարակություն՝ Հասարակագիտություն: 9-րդ դաս. դասագիրք. / Գ. Ղազինյան, Ա. Վաղարշյան; - Եր.: Տիգրան Մեծ, 2023. - 176 էջ:

**Տ. Սիմոնյան**, Հասարակագիտություն: 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար / Կ. Հարությունյան, Հ. Բարսեղյան, Ն. Գալստյան, Ա. Մանուչարյան, Տ. Սիմոնյան (Թեմա 4, Թեմա 6).— Եր.: «Զանգակ» հրատ., 2023. -120 էջ:

Հասարակագիտություն: 8-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար / **Կ. Հարությունյան, Հ. Բարսեղյան, Տ. Սիմոնյան** (Թեմա 2). - Եր.: «Զանգակ» հրատ., 2024. - 144 էջ:

#### **2 ուսումնական ձեռնարկ.**

**Կ. Ամիրյան** Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը (դասագիրք),, էլեկտրոնային հրատարակություն (ISBN 978-5-8084-2636-8 (էլեկտրոնային)), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2023, 400 էջ, Հեղինակների խումբ, Ամիրյան Կարեն՝ գլ. 8 (§1-4):

**Ա. Վաղարշյան** Դատական իշխանության անկախություն. Ձեռնարկ Արդարադատության ակադեմիայի ուսանողների համար / Ա. Վաղարշյան, Գ. Դանիելյան, Է. Խունդկարյան, Վ. Շուբերտ. Գ.Դանիելյանի ընդհանուր խմբագրությամբ. Երևան. «Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի» հայաստանյան մասնաճյուղ, 2024. - 242 էջ:

**15 գիրական հոդված:**

Գիտական հոդվածները հիմնականում՝ վերաբերում են ամիբիոնի ծրագրերում ներառված «Իրավունքի օնթոլոգիա» մենագրության բովանդակային հարցադրումներին:

**4. Միջազգային, հանրապետական և ֆակուլտետի գիրաժողովներում ներկայացվել է 9 զեկույց**

**Գևորգ Դանիելյան.**

1. «ՀՀ անկախության հռչակագրի պաշտպանության հրամայականը և ազգային կենսունակ պետության տեսլականը» համաժողովում (2024թ. փետրվարի 29-ին, Երևան) ներկայացվել է զեկույց՝ «ՀՀ անկախության մասին» Հռչակագրից հրաժարվելու իրավաքաղաքական հետևանքները» թեմայով:

2. ԵՊՀ հիմնադրման 105-ամյակին նվիրված ԵՊՀ ՈՒԳԸ միջազգային 10-րդ գիտաժողովի Իրավագիտության մասնագիտական բաժանմունքի վարման աշխատանքները՝ 2004թ. հոկտեմբերի 9-ին, ք. Երևան:

3. ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում մասնակցել եմ «Քաղաքականության և միջազգային հարաբերությունների մասին «Եվրասիական խաչմերուկների աշխարհաքաղաքականություն. փոխակերպումներ, մարտահրավերներ և զարգացման ուղիներ» խորագիրը կրող միջազգային գիտաժողովին, 2024թ. հոկտեմբերի 10-11-ին, Երևան:

**Արթուր Վաղարշյան.**

1. Մասնակցություն՝ «Իրավահավասարությունը, օրենքի միատեսակ կիրառությունը եվ հակախտրականությունը սահամանդրական դատարանների պրակտիկայում» թեմայով գիտաժողովին, 23-24 մայիսի, 2024 թ., Վայրը՝ Ծաղկաձոր, Կոտայքի մարզ:

2. ԱՄՆ ՄԶԳ/Հայաստանի արդարադատության ոլորտի աջակցության ծրագիր, աշխատաժողով նվիրված «Դատական անկախության, կարգապահական պատասխանատվության և դատական վերահսկողության հիմնահարցերին», 15-18 դեկտեմբերի, 2023 թ., վայրը՝ Դիլիջան:

3. Международная конференция «Конституционное правосудие: достоинство, свобода и справедливость для всех», 7-8 сентября 2023 г., Республика Казахстан, Астана.

4. Գիտաժողով «Պաշտպանության բնագավառում պետական կառավարման մարմինների լիազորությունների իրականացման հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով: Զեկույցման թեման՝ Սահմանադրությունը և երկրի պաշտպանության կարգավորման հիմնահարցերը: 5 դեկտեմբերի, 2023 թ., Կազմակերպիչ՝ ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան, վայրը՝ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ:

**Տարոն Սիմոնյան.**

1. Չճանաչված և մասամբ չճանաչված պետություններում մարդու իրավունքներին (Human Rights in Unrecognized and Partially Unrecognized States:

Charting a Path Forward), գիտական քննարկում կազմակերպված ԱՄՆ Հայ իրավաբանների ասոցիացիայի (Armenian Bar Association) և Հարավարևմտյան իրավունքի դպրոցի (Southwest Law School) կողմից – ԱՄՆ, Լոս Անջելես, մայիս, 2024:

2. Ընթացիկ գիտական հանդիպումներ երիտասարդների, ուսանողների և այլն:

### **Արմեն Ասատրյան.**

1. Սանկտ-Պետերբուրգի փաստաբանների պալատի կողմից կազմակերպված «LEGAL DIALOGUE - 2023» (Международная конференция в Ереване "LEGAL DIALOGUE – 2023: ТРИ ДНЯ В АРМЕНИИ") միջազգային իրավական կոնֆերանս: 2023թ. մայիսի 17-19:

2. ՀՀ ԳԱԱ «Փորձագիտությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի «GTH DNA Consulting Company» և «Eura DNA, Europe’s premier DNA resource»-ի կողմից կազմակերպված «Advancing Forensic DNA Database Programs in Armenia» թեմայով միջազգային տարածաշրջանային համաժողով: 2024թ. մայիսի 7

3. Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (Council of Bars and Law Societies of Europe) «Փոխանակման, համագործակցության և իրազեկման հարթակ» կոմիտեի (The Platform for Exchange, Cooperation and Outreach) առցանց նիստ: Չեկոյց «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի փոփոխության նախագծում փաստաբանությանը առնչվող խնդրահարույց դրույթների վերաբերյալ: 2023թ. հոկտեմբերի 6:

### **Միջազգային գիտաժողովներում ներկայացված զեկույցներն են՝**

1. «ՀՀ անկախության հռչակագրի պաշտպանության հրամայականը և ազգային կենսունակ պետության տեսլականը» համաժողովում (2024թ. փետրվարի 29-ին, Երևան) Գ.Դանիելյանը ներկայացրել է զեկույց՝ ««ՀՀ անկախության մասին» Հռչակագրից հրաժարվելու իրավաքաղաքական հետևանքները» թեմայով:

2. Գ.Դանիելյանը իրականացրել է ԵՊՀ հիմնադրման 105-ամյակին նվիրված ԵՊՀ ՈԻԳԸ միջազգային 10-րդ գիտաժողովի Իրավագիտության մասնագիտական բաժանմունքի վարման աշխատանքները՝ 2004թ. հոկտեմբերի 9-ին, ք. Երևան:

3. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում Գ.Դանիելյանը մասնակցել է «Քաղաքականության և միջազգային հարաբերությունների մասին «Եվրասիական խաչմերուկների աշխարհաքաղաքականություն. փոխակերպումներ, մարտահրավերներ և զարգացման ուղիներ» խորագիրը կրող միջազգային գիտաժողովին, 2024թ. հոկտեմբերի 10-11-ին, Երևան:

## **5. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություն**

2024թ. փետրվարի 2-ին տեղի է ունեցել «Մարդու իրավունքներ և սահմանադրական արդարադատություն» ծրագրով առկա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանությունը: Արդյունքները ունեն հետևյալ պատկերը՝

5 մագիստրոս, 5 գերազանց գնահատական:

2024թ. մայիսի 8-ին, 9-ին տեղի են ունեցել առկա ուսուցման բակալավրիատի «Սահմանադրաիրավական» մասնագիտացման ավարտական աշխատանքների պաշտպանությունը: Արդյունքները ունեն հետևյալ պատկերը՝



27 ուսանող, որից մեկը գնահատվել է անբավարար, 8-ը՝ բավարար, 13-ը՝ լավ, 5-ը՝ գերազանց:

2024թ. հունիսի 12-ին տեղի է ունեցել հեռակա ուսուցման բակալավրիատի «Սահմանադրաիրավական» մասնագիտացման ավարտական աշխատանքների պաշտպանությունը: Արդյունքները ունեն հետևյալ պատկերը՝

մասնակցել է 4 ուսանող, որոնցից 3-ը գնահատվել է բավարար և մեկը՝ լավ:

Ներկայումս ամբիոնի «Մարդու իրավունքներ և սահմանադրական արդարադատություն» ծրագրում ներգրավված է 9 մագիստրոս 2-րդ տարվա, 5 մագիստրոս՝ 1-ին տարվա /2024-25 ուս. տարի/, Սահմանադրաիրավական մասնագիտացմանը առկա ուսուցմամբ ներգրավված է 21 ուսանող:

Այս ոլորտում աշխատանքը բարելավման կարիք ունի, ինչին անդրադարձ կարվի ստորև:

## **6. Գիտամանկավարժական կադրերի պատրաստում և վերապատրաստում**

Հաշվետու շրջանում ամբիոնում գործում է 19 դասախոս՝ 13-ը հիմնական և 6-ը արտաքին համատեղությամբ:

Ներկայումս ուսանում են 4 առկա ասպիրանտ, 1 հեռակա ասպիրանտ և 1 հայցորդ:

2023թ. դեկտեմբերին ամբիոնի առկա ասպիրանտ Հ. Լեյլոյանը հանձնել է մասնագիտական մինիմումը, գնահատվել է գերազանց:

2024թ. հունիսին ամբիոնի հայցորդ Ա. Սարգսյանը հանձնել է մասնագիտական մինիմումը և կասեցրել հայցորդությունը սեպտեմբերին:

2024թ. սեպտեմբերին ամբիոնի հայցորդ Դ. Ղուկասյանը կասեցրել է հայցորդությունը:

Ասպիրանտների և հայցորդների հետ տարվող աշխատանքը համակարգված է, արդյունքները կանխատեսելի են:

Կարծում եմ, հաշվի առնելով ամբիոնի դասախոսական կազմի միջին տարիքը, այլ աշխատանքում ներգրավվածության բարձր տոկոսը, ասպիրանտների և հայցորդների ընդհանուր թվի ավելացմանն ուղղված մեր նկատառումներն արդարացված են:

Այս ոլորտում խնդիրը ասպիրանտների և հայցորդների տեղերի համար հայտեր ներկայացնելն է, քանի որ գրեթե հիմնականում՝ վերապահվել է ղեկավարելու իրավունք ունեցող դասախոսների վրա, իսկ համապատասխան փորձի ու մշակույթի պակասն իրեն զգացնել է տալիս, մասնավորապես, ծանուցումից հետո անցել է 3 շաբաթ, և միայն կրկնակի հիշեցումներից հետո ներկայացվեցին հայտեր:

## **7. Ամբիոնի համալսարանական և արտահամալսարանական գործունեությունը**

Ամբիոնի անդամները վերապատրաստման կամ ընդհանուր կրթական ծրագրերով դասախոսել են նաև այլ կազմակերպություններում. Գ. Դանիելյանը՝ Պետական կառավարման ակադեմիայում, Կ. Ամիրյանը՝ Արդարադատության ակադեմիայում, Ն. Դավթյանը՝ Հայ-ռուսական համալսարանում (Սլավոնական համալսարան):

Ամբիոնի անդամները՝ Գ.Դանիելյան, պարբերաբար մասնակցում են վերապատրաստման դասընթացների: Մասնավորապես Գ. Դանիելյանը

վերապատրաստման դասընթացներ է անցկացրել Աուդիտորական պալատում գրանցված աուդիտորների համար:

Արմեն Ասատրյանը իրականացրել է վերապատրաստում Փաստաբանների պալատի կողմից կազմակերպված «Պայմանագրային պարտավորությունների առանձնահատկությունները և հիմնախնդիրները քաղաքացիական իրավունքում» թեմայով, 2024թ. մարտի 29-ին: Իրականացրել է վերապատրաստում Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղարության ֆինանսավորմամբ՝ «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության «Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիկինգի» ծրագրի շրջանակներում, 2023թ. ապրիլի 1- 2:

## **8. Ամբիոնի աշխատակարգը**

Ամբիոնի նիստերն անցկացվել են առնվազն ամիսը 1 անգամ: Ամբիոնի նիստերում, ըստ նախապես հաստատված տարեկան ծրագրի՝ լսվել են ուսումնական, գիտական բնույթի հարցեր: Դրանք վերաբերել են դասախոսություններ կարդալուն, գործնական և լաբորատոր պարապմունքներ անցկացնելուն, մագիստրոսական թեզերի ընթացքին, գրախոսելուն, ստուգարքներ և քննություններ անցկացնելուն, արտալսարանական աշխատանքներին, արդիական հիմնահարցերով համալիր գիտական հետազոտություններ նախաձեռնելուն և այլն:

## **9. Նկատառումներ՝ ամբիոնի աշխատանքների բարելավման ուղղությամբ**

Նախորդ հաշվետվությամբ նախանշել էի, որ *ամբիոնը հիմնականում շփվելով սկսնակ ուսանողների հետ, ամբողջովին չէ, որ կարողացել է նպաստել անհրաժեշտ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորելուն*: Կոնկրետ իմ ուսումնասիրությունները, այդ թվում՝ դասալսումները բերում են այն համոզման, որ մենք թերևս գոհանում ենք, երբ ուսանողները ներկայացնում են բարձր իրազեկվածություն և նյութը կարողանում են հնարավորինս սահուն շարադրել: Իմ դիրքորոշումն այն էր, որ այդպիսի մեթոդաբանությունը այնքան էլ խթանող չէ, բացի այդ՝ մասնագիտությանը խորանալու հարցում կարող է ստեղծել ոչ համարժեք ընկալումներ, մասնավորապես հենց այդ շրջանում ձևավորվում է իրավագիտության, իբրև դյուրին հաղթահարվող մասնագիտության անհամարժեք ընկալում, ինչը հետագայում մեր գործընկերների համար անհարկի բարդություններ է առաջացնում, երբ վերջիններս փորձում են զարգացնել ինքնուրույն մտածելու, ձեռք բերած գիտելիքներով իրավիճակային խնդիրներ լուծելու ունակությունները և հմտությունները: Կարծում եմ, որ մենք պետք է ելակետ ընդունենք այն, որ տարիքային առանձնահատկությունով պայմանավորված, մեծածավալ տեղեկատվություն յուրացնելու ունակությունները ուսանողների մոտ հոգեբանորեն ձևավորում են անընդունելի, անգամ խեղաթյուրված պատկերացումներ առ այն, որ նախ՝ իրավագիտությունը այնքան էլ բարդ մասնագիտություն չէ, ինչպես իրենք էին կարծում, և երկրորդ՝ իրենք գրեթե կայացած մասնագետներ են: Կարծում եմ, մենք պետք է շարունակենք ավանդական մեթոդաբանությունը վերանայելու մեր նախաձեռնությունը և շեշտը դնենք ոչ միայն լրացուցիչ աղբյուրներից պարտադիր օգտվելու (կարծում եմ, օրինակ՝ Վենետիկի հանձնաժողովի, ԵԽ Նախարարների կոմիտեի և մանաբնույթ այլ կառույցների բանձների և այլ նյութերի մասին ուսանողը չպետք է առաջին անգամ լսի բարձր կուրսերում), այլև փորձի իր սեփական տեսակետն ունենալ խնդրահարույց հարցերի շուրջ:

Այս տեսանկյունից նկատելի դրական տեղաշարժ արձանագրվել է, մասնավորապես, ուսանողներին հանձնարարվում է պատրաստել ոչ միայն իրազեկվածություն ապահովող, այլև հնարավորինս ինքնուրույն վերլուծությամբ ուղեկցվող զեկուցումներ, սակայն, կարծում եմ, դեռ հնարավոր բոլոր քայլերը չեն արվել: Վերջին հաշվով, չպետք է անտեսել, որ առաջին կուրսում ուսանողների կողմից առավել հետևողական ջանքերը, բարեխիղճ ձևավորված զեկուցումները ոչ միայն մեր ջանքերի, որքան ավանդույթի արդյունք են: Բոլորս էլ գիտենք, որ, որպես կանոն, այդ կուրսում էնտուզիազմը համեմատաբար մեծ է, անգամ միջակություններն են երբեմն ձգտում ինտեգրվել ընդհանուր մոտեցումներին:

*Անհանգստացնող է ոչ միայն մագիստրանտների, այլև ասպիրանտների ու հայցորդների ղեկավարների պասիվությունը գիտաժողովներում:* Ստացվում է, որ ղեկավարների մի մասը փորձում է սահմանափակվել ասպիրանտի կամ հայցորդի հետ անմիջական աշխատանքներով, անտեսելով, որ ֆակուլտետում կազմակերպվող ամենամյա գիտաժողովները կարևոր միջոց են՝ ստուգելու, թե իրականում ինչպես է հաջողվում իր սանին ներկայացնելու ձեռք բերված արդյունքները, ինչպես է կարողանում պատասխանել գործընկերների հարցերին և այլն: Ստացվում է, որ ղեկավարը իր սանին առաջին և վերջին անգամ լսում է միայն պաշտոնական պաշտպանության ժամանակ, որից հետո անհասկանալիորեն սկսում է իր խոսքում դժգոհել իր սանի ելույթից, հավաստիացնելով, որ թեզը որակով է, ուղղակի ասպիրանտին չհաջողվեց համարժեք ներկայացնել և այլն:

*Միջազգային համագործակցության տեսանկյունից, ցավոք, չունենք ինքնուրույն ծրագրեր,* այլ մասնակցում ենք արդեն իսկ այլ կառույցների կողմից նախաձեռնած ծրագրերին: Իրականում խնդիրը այնքան էլ միանշանակ չէ, քանզի ամբիոնի կողմից առաջարկվող ծրագրերը ամբողջովին համահունչ չեն միջազգային կազմակերպությունների կողմից նախապես որգերգրած քաղաքականության հետ, ուստի ներգրավված ենք միայն մասամբ համապատասխանող ծրագրերին:

Այս փուլում, օրինակ՝ մենք ներգրավված էինք, ինչպես արդեն նշեցի՝ «Կոնրադ Ադենաուեր» միջազգային կազմակերպության և Արդարադատության ակադեմիայի նախաձեռնությամբ իրականացվող մի կարևոր ծրագրի մեջ, որի նպատակն է արդեն մարտ ամսին ներկայացնել «*Դատական իշխանության անկախության*» ուսումնամեթոդական ձեռնարկ՝ Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների համար:

*Կատարողական կարգապահության էական խախտումներ չեն արձանագրվել,* սակայն առկա են կրթական ծրագրեր կազմելու և նմանաբնույթ այլ հանձնարարություններ կատարելու անհարկի ձգձգումների դեպքեր: Ինչ վերաբերում է առանձին ուշացումներին, ապա դրանք հազվադեպ են, իսկ արձանագրվող դեպքերը, թերևս, թելադրված են երթևեկության աննախադեպ խցանումներով: Ի դեպ, ինքս Սահմանադրական ամբիոնի մի քանի դասախոսների հետ, նախաձեռնել ենք կառավարման համակարգի արմատական բարեփոխման հայեցակարգ, որն ընդգրկելու շղթայի բոլոր օղակները, այդ թվում՝ մայրաքաղաքը կաթվածահար վիճակի հասցրած երթևեկությունը: Անլուծելի խնդիր չկա, ուղղակի շեշտը դնում ենք այն հարցադրման վրա, որ գործադիր իշխանությունը առնվազն պետք է վերջապես նախաձեռնի էլեկտրոնային կառավարման համարժեք գործիքակազմ՝ ներդնելով «միասնական պատուհանի» սկզբունքը:

*Կարևորում եմ նաև ավարտական աշխատանքների քննարկումները՝* կանոնակարգերին և հատկապես գիտական էթիկայի պահանջներին համահունչ դարձնելու խնդիրը: *Ցավոք, դեռևս բախվում ենք իրավիճակների, երբ ամբիոնի*

առանձին դասախոսներ միայն նախապաշտպանության կամ որ էլ ավելի անընդունելի է՝ պաշտպանության փուլում են «նկատում» թերությունները, արձանագրում դրանք իրենց կարծիքներում, ընդ որում, երբեմն զգացվում է նաև ոչ բավարար իրազեկվածության խնդիրը: Այս ուսումնական տարվա ընթացքում մշակել են աշխատանքների կազմակերպման այնպիսի մեթոդաբանություն, որի արդյունքում, կարծում ենք նկատելի կլինի նշված թերությունների հաղթահարումը: Նկատեմ նաև, որ մեր խնդրին այն չէ, որ այս անգամ էլ ղեկավարները, ինչպես ասում են, ավելորդ գլխացավանքից զերծ մնալու հաշվարկով փորձեն ընկնել մեկ այլ ծայրահեղության մեջ՝ չնշելով աշխատանքների թերությունները: Վերջին հաշվով, ոչ բոլոր թերություններն են փոխկապակցվում ղեկավարի աշխատանքի արդյունավետության հետ:

Կարծում եմ, դեռևս անհրաժեշտ չափանիշների չեն բավարարում նաև արտալսարանական աշխատանքները: Մասնավորապես, մենք երբեմն սպասում ենք, որ ուսանողական կառույցները ոչ միայն իրենք նախաձեռնեն սեմինար-քննարկումներ և նմանաբնույթ այլ միջոցառումներ, այլև իրենք էլ ընտրեն թեմաները, մինչդեռ՝ այս հարցում դասախոսների նախաձեռնողականությունը առավել անհրաժեշտ է: Այս առումով ուսանողների հասցեին քննադատական խոսք չունեմ, մասնավորապես՝ իմ վերջին հանդիպման ընթացքում մասնակցում էր շուրջ 25 ուսանող, ինչը իմ պատկերացմամբ, օպտիմալ էր, սակայն կազմակերպիչների կողմից լուրջ քննարկման և ինքնաքննադատության հարց էր դարձել:

**ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի  
պետության և իրավունքի տեսության ու պատմության  
ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր**

**Գ.Բ. ԴԱՆԻԵԼՅԱՆ**